

գրել մանավանդ վերջին տարիների ընթացքում, նա կանգնած է զարգացման ճիշտ ճանապարհի վրա, նա ունի լուսավոր ապագա:

Անընդունելի են նաև հեղինակի անառարկելի տոնով արված մի շարք պնդումները սովետահայ այս կամ այն գրողի ստեղծագործական ներկայի և ապագայի նկատմամբ: Առանձին գրողներին կամ գրողների մի ամբողջ խմբի մասին վաղաժամ հետևություններ անել, ասելով, թե սպասվում են իրենց՝ կամ սպասվում են ալլևա ստեղծագործելն¹, սխալ է: Փննադատը կարող է ամենախիստ որակումներ տալ գրողի այս կամ այն կոնկրետ գործին, ենթարկել այն խիստ քննադատության, սակայն ստանձնել

կանխագուշակողի դեր և դատավճիռ արձակել գրողի ստեղծագործական ապագայի նկատմամբ, սա արդեն չափազանցություն է: Մահովանի, որ հայտնի է, թե ստեղծագործական պրոցեսը այնպիսի բարդ երևույթ է, լի անակրեկալներով, որ ամենահանճարեղ քննադատն անգամ ոչինչ կանխագուշակել չի կարող այդ մասին:

Չնայած մի շարք լուրջ թերություններին, այնուամենայնիվ այս գիրքը, որպես անգրա-նիկը իր տեսակի մեջ, արժանի է ուշադրության և կատարի գրական դեր սփյուռքահայ ընթերցողին սովետահայ գրականության հետ մոտիկից ծանոթացնելու գործում:

¹ Ա. Պալարյան, Նշվ. աշխ., էջ 69 և հալ.

ՀԲ. ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, *Մարտիրոս Ղրիմեցի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958:

Հայ հին ու միջնադարյան բազմահարուստ գրականության շատ ու շատ հուշարձաններ դեռևս չեն հրատարակված և գտնվում են ձեռագիր ժողովածուների էջերում: Հարյուրավոր հեղինակներ, որոնք, ճիշտ է, ստեղծագործական մեծ տաղանդ հանդես չեն բերել, բայց իրենց կարողությունների համեմատ նպաստել են գրականության ու կուլտուրայի զարգացմանը՝ միայն անունով են հայտնի:

Միջնադարյան գրականության դեռևս ձեռագրերում գտնվող հուշարձանների հրատարակությունն ու մենագրական ուսումնասիրությունը մի կարևոր խնդիր է, առանց որի հնարավոր չէ այդ գրականության զարգացման պատկերը ներկայացնել իր ամբողջության մեջ ու իր հիմնական մոմենտներով:

Միանգամայն ճիշտ է Մարտիրոս Ղրիմեցի աշխատության հեղինակը, երբ կրկնում է Մ. Արեղյանի նկատողությունը, թե՛ «Հայ հին գրականության, մատենագրության գիտական պատմություն ստեղծելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ներկայացնել գրական առանձին դեմքերը՝ ցրիվ և ձեռագրային նոր նյութերն ի մի բերելով և հրատարակելով» (էջ 7):

Պետք է նշել, որ վերջին տարիներում ղդալի քայլեր են արվում այդ ուղղությամբ՝ հրատարակվում են միջնադարյան մատենագիրների, իրիխտոփանների, տաղերգուների բնագրերը՝ օժտված համապատասխան հետազոտությամբ: Հայկական ՍՍՌ Մատենադարանի լույս ընծայած գրքերի կողքին այս տարի գրվեցին Գիտու-

թյունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի հրատարակած այդպիսի երեք աշխատություն¹, որոնցից մեկն է գրախոսվող գիրքը: Իրեր բաղկացած է երեք բաժնից՝ «Մարտիրոս Ղրիմեցի» խորագիրը կրող ուսումնասիրությունից, Ղրիմեցու ստեղծագործության բնագրերը ներկայացնող մասից և բանասիրական ու մատենագրական տեղեկություններ պարունակող ծանոթագրություններից:

Երկրորդ բաժնում գրված են Ղրիմեցու երկերի համեմատական տեքստերը: Մարտիրոս Ղրիմեցուց, մինչև այս աշխատությունը, հայտնի էին ընդամենը ինը տաղ: Մարտիրոսյանի գրքում հրատարակված են նրա քսան տաղերը և տեղեկություններ են տրվում ևս 25 զանազան գործերի մասին, որոնք չեն մտել հրատարակության մեջ:

«Բնագրեր» բաժնին հաջորդում են ընդարձակ ծանոթագրությունները: Այստեղ տեղեկություններ են տրվում Ղրիմեցու ստեղծագործությունների սույն ժողովածուում գրված և նրանից դուրս մնացած տպագիրների, ձեռագրերի մասին, ինչպես և արվում են բանասիրական գիտողություններ, պարզվում երկերի գրության ժամանակը, Ղրիմեցու կենսագրության հետ կապված դեպքեր և այլն: «Ծանոթագրություն-

¹ Մ. Թ. Ավդալբեգյան, Քաջատուր կեչառեցի, Արմենուհի Սրսոյյան, Հովհաննես Երզնկացի, Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի:

ներս բաժինը ցույց է տալիս, որ Ա. Մարտիրոսյանը կարողանում է ձեռագրական տվյալները համագրել և համապատասխան եզրակացություններ անել: Հետաքրքիր դիտողություններ կան նաև գրքի տարրեր էջերում եղած ծանոթությունների մեջ, ուր պարզվում են Ղրիմեցու հետ առնչվող բանասիրական մի շարք հարակից հարցեր:

«Ինագրեր» և «Ծանոթագրություններ» բաժինները հիմնականում հաջող են և ցույց են տալիս երիտասարդ հեղինակի բանասիրական ակնհայտ կարողությունները:

Ուսումնասիրության մեջ, որ գրքի առաջին բաժինն է, մանրամասնորեն ներկայացված են Մարտիրոս Ղրիմեցու կյանքն ու գործունեությունը և ստեղծագործության պատկերը: Տրված է նախ Ղրիմեցու կենսագրությունը, որ աշխատության հեղինակը կազմել է օգտագործելով ինչպես Ղրիմեցու ստեղծագործություններում եղած, այնպես էլ մատենագրական կողմնակի տեղեկություններն ու փաստերը: Սակայն, հեղինակին չի հաջողվել լուծել Ղրիմեցու կենսագրությանը վերաբերող իր քննարկած որոշ հարցեր: Այսպես, մերժելով Պոտուրյանի ենթադրությունը, թե Ղրիմեցին ծնվել է «1675 թվի առնները», Մարտիրոսյանը գոռում է. «ենրա ծնունդը բնկնում է 1627-ական թվականներին»: Դրա համար իբրև հիմք նա բերում է խաշատուր Կաֆայեցու տարվա գրության հիշատակությունը, ըստ որի Ղրիմեցին 1657 թ. իբրև պատվիրակ այցելել է Կաֆա՝ «Տղայ գոյով մանուկ բարի»: Մարտիրոսյանը գտնում է, որ եթե նա ծնված լիներ «1675 թ. առնները», 57 թ. կլիներ 52 տարեկան, որին չ'ը կարելի ասել, «տղայ գոյով մանուկ բարի», ուրեմն նա ավելի ուշ է ծնվել:

Մյուս կողմից, քանի որ 1657 թ. նա արդեն ճանաչված ու կշիռ ունեցող գործիչ էր, արժանացած վարդապետական զավագանի, ուրեմն այդ թվականին, հեղինակի կարծիքով, նա պետք է լիներ առնվազն 30—35 տարեկան, այսինքն՝ ծնված 1620-ական թվականներին:

Նկատենք, որ 30—35 տարեկան մարդու մասին ևս չի ասվի «տղայ գոյով մանուկ բարի»:

Համարելով ոչ ճիշտ Պոտուրյանի այն կարծիքը, թե Մարտիրոս Ղրիմեցին Ղրիմի Ս. Խաչ վանքում աշակերտել է Ստեփանոս Թոխաթցուն, երբ վերջինս 1616—1620 թվականներին այնտեղ պարապում էր ուսուցչության, հեղինակը ասում է. «այդ թվականներին Ղրիմեցին հասել է մեկ-երկու տարեկան լինելու» (չ 10), չնկատելով, որ այդ նշանակում է, թե նա ծնվել է 1610-ական և ոչ 20-ական թվականներին:

1659 թ. Ղրիմեցին դառնում է Պոլսի պատրիարք, երբ դեռ եպիսկոպոս չ'ը: Ղրիմեցու՝ առանց եպիսկոպոս լինելու պատրիարք նշանակվելը Մարտիրոսյանը բացատրում է այն հանգամանքով, որ թեև Ղրիմեցին բավական նշանավոր դեմք էր և բարձր պաշտոններ էր վարել, բայց 50 տարեկան չկար, այդ պատճառով եպիսկոպոսության աստիճան չ'ը ստացել, քանի որ եպիսկոպոսական աստիճանի համար, «եթե բացառիկ դեպքեր չկան, պահանջվում է 50 տարեկան հասակ» (չ 9, ծանոթ. 3): գրում է նա, հենվելով Թոփճյանի Ձեռագրաց ցուցակի վրա՝ բայց մոռանում է, որ մի քանի էջ հետո նշելու է, թե Ղրիմեցին Հակոբ Զուղայեցու կողմից Ղրիմի վիճակի համառ ձեռնադրվում է եպիսկոպոս 36—40 տարեկան հասակում (էջ 17):

Սառնալու անտարբեր շարադրող չէ գրախոսվող աշխատության հեղինակը, մի հատկություն, որ ինքնըստինքյան դրական է, եթե միայն դա չի հասցնում ուսումնասիրվող թեմայով տարվելուն և չի խանգարում օբյեկտիվ մոտեցմանն ու գնահատմանը: Դժբախտաբար, ուսումնասիրության մեջ կան չսփառացրություններ, ծայրահեղություններ ու սխալներ Ղրիմեցու հասարակական գործունեության և ստեղծագործության գնահատման հարցերում, որոնք զգալիորեն իջեցնում են աշխատության արժեքը:

Քանի այն է, որ Ա. Մարտիրոսյանը ամեն կերպ ջանում է բարձրացնել, հասարակական նշանավոր գործիչ ու մեծ կարողությունների տեր ստեղծագործող դուրս բերել Մարտիրոս Ղրիմեցուն: Դրա համար նա դիմում է աննշանակ փաստերի և նրանցից հանում ծայրահեղ եզրակացություններ:

Խոսելով Երուսաղեմի ս. Հակոբի վանքի շուրջ եղած պայքարի և Կ. Պոլսի պատրիարքարանի աթոռակալական կոնվենքի մասին, նա գոռում է. «Սակայն քչերն էին գիտակցում այդ (ս. Հակոբի վանքի կորուստի «ոչ թե սակ կոռնակն», այլ ուղղակի համադրային շահերի տեսակետից՝ անհանդուրժելի» լինելը — էմ. Պ.) և հիմա ասում համազգային ազևոր կանխելու համար» (էջ 14): Այս քչերից մեկն էր Մարտիրոս Ղրիմեցին, որը 1659 թ. նշանակվում է Պոլսի պատրիարք «տեղակալների իշխանության շրջանում կատարված ապօրինությունները և անկարգությունները վերացնելու համար» (էջ 14):

Պարզ չէ, թե ով է նշանակում նրան պատրիարք՝ «կատարված ապօրինություններն ու անկարգությունները վերացնելու համար»: Փաստն այն է, որ Ղրիմեցին մասնակցում էր այդ աթոռ-

ռականական կոիվներին, որի հետևանքը եղավ նրա՝ պատրիարք դառնալը, իսկ Մարտիրոսյանի պնդումը վերոհիշյալ նպատակով Ղրիմեցուն պատրիարք նշանակելու մասին՝ լույս մտացածին է, Ղրիմեցուն անաղարտ ու անաշուղործիչ դուրս բերելու միտման արդյունք։

Անդրադառնալով նդիազար Այնթապցու Քուրբիայի տիրապետության տակ գտնվող հայկական շրջանների համար էջմիածնին հակաթու կաթողիկոսություն ստեղծելու կապակցությամբ նդիազար-հակորյան պայքարի հարցին, Ա. Մարտիրոսյանը միանգամայն մերժում է գրականության մեջ տարածված կարծիքը, բայց որի այդ պայքարը բացատրել են անձնական շարժառիթներով և փառասիրական նկրտումներով, ոչ մի խոսք չստեղծվում չպարզելով, սակայն, պայքարի շարժառիթները, պատճառներն ու նպատակները։ Բանն այն է, որ Այնթապցու Ջուղայեցու պայքարը իսկապես որ փառասիրական նպատակներ ու անձնական շարժառիթներ ունեցել է։ Բավական էր, որ Այնթապցին 1682 թ. դառնար էջմիածնի կաթողիկոս, որ Բեջանդից վերանար հակաթու կաթողիկոսություն խնդիրը։ Նդիազարյան և Հակորյան պայքարին մասնակցել է և Հակոր Ջուղայեցու կողմից նպասկոպոս ձեռնադրված Մարտիրոս Ղրիմեցին։ Մեր կարծիքով «համազգային աղետը» գիտակցող մեծ գործի մտահոգությունը չէ, որ Ղրիմեցուն մասնակից է դարձրել այդ պայքարին, ինչպես ներկայացնում է գրախոսվող գրքի հեղինակը։ Այլ բան կլիներ, իհարկե, եթե Մարտիրոսյանը ցույց տար, թե հասարակական ինչ խավերի վրա կլինեց նեմում, ինչ տրամադրություններ ու շահեր կլինեց պայքարի մեջ հակամարտ կողմերը, այդ թվում և Ղրիմեցին։ Այս խնդրի բացահայտումը շատ ավելի օգտակար կլիներ, բան Ղրիմեցուն փառասիրական տենչերից հեռու, համազգային շահերի կրքոտ ու անձնուրաց մարտնչող դուրս բերելը։

Ճիշտ է, իհարկե, որ Ղրիմեցին «այդ պայքարում հսկայական ուժ ու եռանդ է գործադրել, կրել անձնական զրկանքներ ու տառապանքներ, բնկել է պարտքերի մեջ, դատապարտվել է բանտարկության, մազապուրծ խուսափել մահից, բայց երբևէ չի ընկրկել և չի զիջել ոչ մի պայմանով»։ Բայց այս բոլորի մեջ թիչ դեր չեն խաղացել անձնական շարժառիթները։ Ուստի և չի կարելի համաձայնել հեղինակի այն եզրակացության հետ, թե «թույլ չտալով բառատելու առանց այն էլ թույլ հայ վարչական-եկեղեցական իշխանությունը և գործակցելով Հակոր Ջուղայեցի կաթողիկոսին՝ նա (Մարտ. Ղրիմեցին — էմ. Պ.) կարևոր դեր կա-

տարեջ մեր ժողովրդի պատմության մեջ ժեպարի երկրորդ կեսին, երբ ազգային աղետագրական միտքը ծայր էր առնում և կարող էր թուլանալ ու մարել երկրի մի նոր քառատման հետ» (էջ 23)։

Ուղղակի պետք է ասել, որ այդ թույլ չտալը Մարտիրոս Ղրիմեցին չէր. ուստի և նրան պատմական այդպիսի հսկայական դեր հատկացնելը անվազն չափազանցություն է։

Նդիազար-հակորյան պայքարի մասին խոսելիս հեղինակը չի բացահայտում պայքարի հիմնական դրդապատճառները, սլաքարող կողմերի սոցիալական պայմանավորվածություններն ու հենակետերը։ Մենք գրականագետ-բանասեր հեղինակից չենք պահանջում, որ պատմական այդ բարդ հարցը բնարկեր այստեղ¹, միայն նշում ենք, որ չի կարելի այս հարցերը շրջանցել, մի կողմ թողնել Ղրիմեցու սոցիալ-դասակարգային պատկանելության հարցը և նրան դուրս բերել մի անբասիր գործիչ, որ գործում է ելնելով համազգային շահերից, և նույնիսկ, թեկուզ և անուղղակիորեն, կապել ազգային-աղետագրական շարժման հետ։

Թե ինչպես անշահակ փաստերը հեղինակի մոտ դառնում են այնպիսի եզրակացությունների հիմք, որոնք չեն բխում այդ փաստերից, երևում է հետևյալ օրինակից։

«Ղրիմեցին ոչ միայն ձեռագրեր է ընդօրինակել, — գրում է Ա. Մարտիրոսյանը, — այլև իր պատրիարքության տարիներին զբաղվել է մատենադարանները հարստացնելով, հին ձեռագրերը հավաքելու և պահպանելու աշխատանքով»։ Այդ ասվում է մի ձեռագրի հետևյալ հիշատակարանի հիման վրա. «Դարձեալ ի թուին Ռձն (— 1667) կրկին գրեցաւ գիրքս ի Կրետէս կղզին ի ֆրանկաց և բերեալ ի Ստամպոլ գնեաց զսա Սուրբ Երուսաղեմայ վէժիլ Խաչատուր վարդապետն. հրամանաւ Մարտիրոսի վարդապետի»։

Եթե Ղրիմեցին հրամայած էլ լիներ մի ձեռագիր գնել, այդ դեռևս չի նշանակում, թե նա զբաղվել է մատենադարանները (այն էլ ոչ մատենադարանը) հարստացնելով և ձեռագրերը հավաքելու ու պահպանելու աշխատանքով։ Բայց հիշատակարանում ձեռագիր գնողը Խաչատուր վարդապետն է, որին Աստվածատուր պատրիարքը հանձնարարել էր իր մահվանից հետո «վերակացու և հոգաբարձու» լինել «սուրբ»

¹ Այդ հարցերը հիմնականում լուծված են Ա. Հովհաննիսյանի «Հակոր Դ Ջուղայեցի կաթողիկոսը և տաճկահայ նվիրականության ինդիկը» («Արարատ», 1915, էջ 195—205) և նրա այլ աշխատություններում։

գրող»։ Խաչատուրը ձեռագիրը գնել է պատ-
րիարք Ղրիմեցու հրամանով, այսինքն՝ թույլ-
տվությամբ, իսկ պատրիարքի թույլտվությունը
գումարներ ծախսելու համար անհրաժեշտ էր։
Այստեղ «ուղղակի «հրաման» բառի տարբեր
իմաստները շփոթության մեջ են գցել Մարտիրոսյանին։

Ուսումնասիրության հաջորդ մասը նվիրված
է Ղրիմեցու ստեղծագործության վերլուծմանը։
Հեղինակը Ղրիմեցու ստեղծագործությունը են-
թարկում է խմբավորման՝ պատմա-քաղաքա-
կան ստեղծագործություններ, Երզնիական
և քնարական տաղեր, կրոնական և այլ բնույթի
երկեր։ Ամեն մի տեսակի, կամ ինչպես ինքն է
ասում, սեռի մասին խոսելիս, նա նկատի ունի
ովյալ տեսակի պատմությունը սկզբից մինչև
XVII դար, մինչև Մարտիրոս Ղրիմեցին։ Այս-
պես, Ղրիմեցու «Երեմիայի ողբը» վերլուծելուց
առաջ, խոսում է մինչև այդ եղած ողբերի մա-
սին, համառոտ ակնարկ տալով դրանց մասին,
պարզելով ողբերի, իբրև գրական տեսակի, ծա-
գումն ու զարգացումը, դրանք պայմանավորող
սյուժեական պատճառները։

Այդպիսի մի համառոտ ակնարկ է տրվում
նաև Երզնիական ստեղծագործությունների մա-
սիս։

Հաջող է Ղրիմեցու Անեծքի վերլուծությունը։
Նշվում է, որ ժողովուրդը հավատ է ունեցել
անեծքի հրաշագործ ուժի մասին, և որ այդ հա-
վատը նախնական բնույթ ունի ու ծնունդ է առել
խոսքի կախարդական ուժի նկատմամբ ունեցած
հնագույն բմբռնումից, անեծքը դիտվել է որպես
բնության ու մարդկային կյանքի մեջ արտա-
հայտվող «շար ուժերը արձակելու միջոց, նրանց
ավերելը բնույթի խոսքի ուժով վերարծարծելու
եղանակ» (էջ 57), հակառակ աղոթքի, որը է
«անբմբռնելի, ամենազոր ուժին դիմելու ձև»
նրանից որն է բան հայցելու համար» (նույն
տեղ)։ Անեծքի գործության նկատմամբ ունեցած
հավատի պատճառով այն գործածվել է իբրև
ազդու զենք թշնամու դեմ, երբ պայքարի ուրիշ
միջոց չկա։

Քննելով ձեռագրական տարբերակները, Մար-
տիրոսյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ
այդ անեծքը, որ Ղրիմեցին գրել է ընդհանուր
գործածության համար, հետագայում «կոնկրետ
բնույթ է ստացել և իբրև զենք ծառայել կաթո-
լիկական եկեղեցու ոտնձգությունների դեմ»
(էջ 61)։

Լավ է վերլուծված նաև «Տաղ այրի Լրիցուն
է» խորագրով բանաստեղծությունը, որտեղ ար-
տահայտված են մարդու ներքին աշխարհում ու
զգացումները՝ զարնան, ամռան ու աշնան հա-

կադրությամբ, բացահայտված է այրի Լրիցի
տխուր հոգեվիճակը։

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ
տաղերը վերլուծելիս նույնպես Մարտիրոսյանը
ընկնում է որոշ ծայրահեղությունների ու
սխալների մեջ, որով և թյուր պատկերացում է
ստեղծում Ղրիմեցու՝ իբրև ստեղծագործողի
մասին։

Չի կարելի շանդրադառնալ Մարտիրոս Ղրի-
մեցու «Ողբ Երեմիա մարգարէին, որ է երա-
յեցերէն Թրէնի» գործի Մարտիրոսյանի վեր-
լուծմանը, որտեղ նա ակնհայտ սխալների մեջ
է ընկել։ Այս գործը Երեմիա մարգարէի հայտնի
ուրն է Ղրիմեցու կողմից տողատված, և ուրիշ
ոչինչ։ Այստեղ, ինչպես գրում է Մարտիրոս-
յանը, Ղրիմեցին «գրեթե ոչ մի հավելում չի
արել Երեմիայի ողբի մեջ և ամեն կերպ աշխա-
տել է հարագատ մնալ» (էջ 40)։ Այդ նշելով
հանդերձ, այնուամենայնիվ ամբողջ 8 էջի վրա
նա վերլուծում է Ողբի բովանդակությունը իբրև
Ղրիմեցու ստեղծագործություն։ Նրա կարծիքով՝
«Այս ողբի մեջ կա ոչ միայն վիշտ ու հեծե-
ծանք, այլև բոլոր ճակատագրի դեմ, մի տեսակ
ուղղված, մեղադրանք, որ ուղղված է ամենա-
կալին։ Կարծես նա էլ Պրիկի նման ինչ-որ վեճ
է ուզում բաց անել աստծո դեմ(!)» (էջ 35)։

Եթե այդ այդպես էլ է, ապա զա Երեմիա
մարգարէինն է և ոչ Ղրիմեցուն, որովհետև
Ղրիմեցին սոսկ տողատել է Երեմիայի ողբը։

Այնուհետև՝ Ողբի մեջ, գրում է Մարտիրոս-
յանը, «մեղքը պատժի աղբյուրն է, ապաշխա-
րանքը՝ փրկության։ Բայց տեսնում ենք, թե
որքան է նվազել բրիստոնեական խոնարհու-
թյունը» (էջ 37)։

● Եթե բրիստոնեական խոնարհության նվազման
մասին խոսք կա, ապա այն նվազել է Երեմիա
մարգարէի մոտ։

«Ողբը իմաստավորվում է, փրկության գաղա-
փարն ազատագրվում է հայեցողական, թույլ
շերտերից և ստանում համեմատաբար ավելի
մարտնչող բնույթ։ Այստեղ, իհարկե, արտացոլ-
ված է դարաշրջանի ոգին», — կարդում ենք
37-րդ էջում։

Թե ինչպես է ողբը վերաիմաստավորվում,
ինչպես է այնտեղ արտացոլված դարաշրջանի
ոգին և, վերջապես, այդ ինչ դարաշրջանի ոգի
է՝ մնում է անհայտ։ Բայց եթե խոսք կա դարա-
շրջանի ոգու մասին, ապա դա Երեմիա մար-
գարէի դարաշրջանի ոգին է, Աստվածաշնչում
արտահայտված ոգին։

Ակնհայտ սխալ է Երեմիայի ողբի՝ Ղրիմեցու
տողատած տեքստի մեջ տեսնել «վարակիչ,
ոգեշնչող և հայրենասիրական բնույթ»։ Չէ՞ որ

Ղրիմեցիներն ողբեր տողատելիս, հեղինակի իսկ խոստովանություններ, «գրեթե ոչ մի հավելում չի արել», միայն մի կողմ է թողել «Հուարութ, լուարութ գայս», «Ձեզ ասեմ, ձեզ ասեմ», «Եւ եղև ինձ վայ, վայ» և այլն կանչերու թայց մի՞թե այդ լալահառաչ կանչերի մի կողմ թողնելը փոխել է Ողբի բովանդակությունը, դարձրել ֆրիկյան տիպի բողոքող ստեղծագործություն, հայրենասիրական բողոքող ու բնավզող ոգի ու բնույթ տվել նրան: Զուր է նման անորոշալի, «խնդ-որ» ոգի փնտրել այստեղ:

Ամբողջ խնդիրն այն է, որ միջնադարում Աստվածաշնչից թեմաներ էին տալիս տողատելու համար, իբրև վարժություններ, որոնցից մեկն է և Ղրիմեցու՝ Երեմիայի ողբի տողատումը: Ըստ որում այստեղ տողատման կապակցությամբ բառերի շատ աննշան ետևադուրությունը, մի երկու բառի բաց թողնելը և կամ «Պակասեցին աչք իմ յարտասուաց»-ը «Արտասուք աչքաց պակասեցան», «գուստր Երուսաղեմին»-ն «Սաղեմի դուստր» ձևով ասելը ու նման կարգի փոփոխությունները հիմք չեն տալիս ասելու, թե այդ գործը Ղրիմեցու մոտ «լավատեսության մի ցնծալից պոռթկումն է, որը դառնում է հուսո և հավատի հիմն»:

Նորից ենք կրկնում, որ եթե լավատեսության ցնծալից պոռթկումն է, հուսո և հավատի հիմն, ապա դա Երեմիա մարգարեի լավատեսության պոռթկումն է:

Նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքը, որ Ղրիմեցին տողատման համար բնութիւն է երեմիայի ողբը և ոչ թե մի ուրիշ բան: Մենք չէինք առարկի հեղինակին, եթե նա վերածեր Երեմիայի ողբը որպես այդպիսին և ապա նշեր, թե ինչու է Ղրիմեցին այդ թեմային ղյումել:

Այլ բան կրկնել, իհարկե, եթե Ղրիմեցին ինքնուրույն ողբ գրելը Երեմիայի նմանողություններ, ասելով՝ այնպիսին, ինչպիսին Շնորհաբու «Ողբ Եղեաթոյ»-ն է: Առկա հանգամանքներում Մարտիրոսյանը պարտավոր էր ցույց տալ, թե ինչ կական տարբերություն կա Երեմիայի ողբի ու նրա՝ Ղրիմեցու տողատման միջև, ինչով է ժամանակակից դարձել վերջինս:

Այս բոլորից հետո շինծու է հնչում գրախոսվող գրքի հեղինակի պնդումը, որ իրը՝ «Մարտիրոս Ղրիմեցու «Ողբ Երեմիա մարգարեին» մի հետաքրքիր օրինակ է, թե ինչպես Աստվածաշունչը միջնադարում եղել է ստեղծագործական անսպառ աղբյուր, որտեղից թեմաներ են քաղել և արտահայտել հակրնդեմ գաղափարներ» (էջ 38):

Մարտիրոսյանը Ողբը վերլուծելիս չի ցույց տվել ոչ մի գաղափար (նույնիսկ ոչ մի տող),

որ չլինելու Աստվածաշնչում, Երեմիա մարգարեի մոտ (չէր էլ կարող ցույց տալ, որովհետև այդպիսի չկան): Էլ չենք ասում հակրնդեմ գաղափարների մասին:

Հատկանշական է, այնուամենայնիվ, որ այսքան նշանակություն տալով ու բարձրացնելով այդ ողբը, գրքի հեղինակը անհրաժեշտ չի գտել այն դեմը Ղրիմեցու բնագրերի իր հրատարակած շարքում:

Ղրիմեցու «Կարգ և թիւ թագաւորաց հայոց» չափածո ժամանակագրության մասին ասվում է, թե այն «մեծ դեր է խաղացել ողբային դիտակցության զարթոնքի համար» (էջ 44): Թերևս կարելի լիներ համաձայնել, եթե ասվեր, որ այդ գործը աղբյուրն է զարթոնքի արտահայտություն է, բայց անհնար է նրան ներգործող (այն էլ մեծ) դեր հատկացնել: Անհնար, սակայն, հնարավոր է դարձել Մարտիրոսյանի գրչի տակ:

Խոսելով «Պատմութիւն Ղրիմայ երկրի» երկի մասին, հեղինակը գտնում է, որ Ղրիմեցին «չգտնելով պատմական աղբյուրներ, երկի նյութը քաղել է անգիր գրույցներից»: Էջ 46-ի ծանոթության մեջ նա հիշում է Ալիշանի հրատարակած մի հիշատակարանը («Հայապատմութեան», էջ 580—582), նշելով, որ Ղրիմի մասին այնտեղ պատմվածները համընկնում են Ղրիմեցու պատմածների հետ, նույնիսկ սկան ոճական ու արտահայտչական շատ նմանություններ, միայն որոշ թվականներ չեն բռնում. «բոլոր Մարտիրոսի խաչախաների գալը Ղրիմ բնկնում է հայոց 500 թվականին, իսկ բոլոր հիշատակագրի՝ 491, հայերի՝ Ախսուրայից Թեոդոսիա և շրջակա վայրերը գաղթելը Ղրիմեցին դնում է 780 թվականին, իսկ հիշատակագիրը՝ 779, Շիրինի իշխանի և թաթար խանի գծությունը՝ 924 թվականին, հիշատակագիրը՝ 917 և այլն» (էջ 46):

Նա կարծում է, թե այդ նմանությունները նրանից են, որ «և Ղրիմեցին, և հիշատակագիրը հենվել են ժողովրդական գրույցների վրա, որոնք միևնույն հենքն են ունեցել» (էջ 46, ծան.):

Ավելորդ է ասել, որ ժողովրդական գրույցները ժամանակագրություն չունեն, մանավանդ կոնկրետ թվականներ, ուստի և, չնայած Ղրիմեցու հիշատակարանում եղած պնդմանը, պետք է կարծել, որ երկուսի հիմքում էլ ընկած է գրավոր աղբյուր:

Ահնարեմ ծայրահեղություն է, երբ Մարտիրոսյանը XVII դարը համարում է «վերածնվող հայ մշակույթի դար», իսկ Ղրիմեցուն՝ «վերածնվող հայ մշակույթի առաջին գործիչներից», որի գործունեությունը համակողմանի բնույթ ունի «ինչպես որ հատուկ է ամեն մի շարժման սկզբնավորողներին» (էջ 75):

Շահ-Աբրահամի՝ հայ բնակչության տեղահանումով ու զաղթեցումով սկսվող դարում, այն դարում, երբ մի կողմից թուրքերը, մյուս կողմից՝ պարսիկները ձգտում էին վերջ տալ հայ ժողովրդի գոյությանը — այդ դարում խոսք անգամ չի կարող լինել «կյանքի և կենսահայեցողության մեջ» եղած «ի՛նչ-որ մի փոփոխություն» (էջ 48) պայմանավորված վերածնվող կուլտուրայի մասին:

Մեր կարծիքով XVII դարում մենք հայ մշակութային վերածնունդ կամ վերածնունդ չունենք, այն էլ իրենից շարժում ներկայացնող, որի սկզբնավորողն է Մարտիրոս Ղրիմեցին: Նման տեսակետի համար տրե՛կ հիմք չկա, իսկ աշխատության մեջ այդ տեսակետը մնում է լոկ հայտարարություն:

XVII դարը որակվել է իբրև հայ գրականության և կուլտուրայի անկման շրջան: Բողոքելով այդ որակման դեմ, Մարտիրոսյանը միաժամանակ հակառակ ծայրահեղության մեջ է ընկնում, այն հայտարարելով հայ մշակույթի վերածնման շրջան, այնինչ խոսք կարող է լինել միայն աշխուժացման մասին:

Նրան, ըստ երևույթին, շփոթության մեջ է գցել Մ. Արեղյանի «Հայոց գրականության պատմություն» II գրքի 4-րդ բաժնի հարցադրումը: Նշելով, որ XVI դարը և XVII դարի առաջին րառոդը հայոց կյանքի և գրականության մեջ ամենից ավելի անկյալ շրջանն է ստեղծված պատմական պայմանների բերումով, որ հայոց նվազած հին բաղարարությունը վերջնական կործանման վտանգի առաջ էր կանգնած, Արեղյանը ցույց է տալիս, որ հայոց մեջ դեռևս կենսունակության ուժ կար ձգտելու կենդանության, ձեռնարկելու նորոգություն: Եվ իսկապես, Արեղյանը այդ շրջանը անվանում է գրականության նորոգության շրջան իր գրքի II հատորի գրելիք-ի կոնսպեկտներում, որը և մտել է հրատարակության մեջ¹:

1 Ա. Մարտիրոսյանը այդ տեսակետը բացել է Մ. Արեղյանից (թեև չի նշում իր աղբյուրը), առանց, սակայն, ուշադրության առնելու նրա գրքի «Առաջաբանը», որից կպարզվեր, որ Արեղյանը XVII—XVIII դարերի իր ճեմարանական դասախոսությունների մեջ քննարկում էր որպես «վերածնության և նոր բարբարոս գրականության» շրջան, սակայն հետագայում հրաժարվելով այդ ինչպիսի և «Հնի, կթոնա-եկեղեցականի վերածնություն և նոր գրարար գրականություն» վերնագրերից, իր տեսակետը արտահայտելու էր «Գրականության նորոգումը XVII—XIX դարերում» խոթադրով, համապատասխան փոփոխություններ մտցնելով և շարադրանքի մեջ, որ ցավոք, չհասցրեց կատարել:

Արեղյանը ցույց է տալիս, որ այդ նորոգումը կարող էր երկու ուղղությամբ զնալ՝ վերանորոգել հին գիրն ու գրականությունը և օգտվել եվրոպական լուսավորությունից: Հենց այս երկու ուղղությամբ էլ գնաց վերանորոգումը: Առաջինը սկսվեց Մյունխաց Անապատի հիմնումով՝ Սարգիս Ամբրոզյանի, Կիրակոս Տրապիզոնցու, Մովսես Սյունեցու և նրանց աշակերտների ջանքերով, որոնք հավաքում են ձեռագրեր, արտադրում, վերանորոգում, ստեղծում դասագրքեր (բերականության, տրամաբանության), կատարում թարգմանություններ և այլն: Եթե խոսում ենք մտավոր վերանորոգման շարժման մասին, ապա դրա կենտրոնները էջմիածինը և Նոր Զուղան էին: Պակաս դեր չի խաղում վերանորոգման մեջ նաև երկրորդ ուղղությունը:

Սակայն այդ երկու ուղղության հետ էլ ոչ մի կապ չունի Մարտիրոս Ղրիմեցին:

Երբ խոսվում է գրականության ու կուլտուրայի անկման մասին XVI դարի վերջում և XVII դարի սկզբում, այդ չի նշանակում, թե դրանք իսպառ վերացել ու գոյություն չունենին, խոսքը ստեղծված պատմական իրադրության պատճառով կուլտուրայի ու գրականության մակարդակի անխուսափելի անկման մասին է, որ չէր կարող չլինել: Բավական է ասել, որ XVII դարում կային մոտ 200 բանաստեղծներ, որոնցից ոչ մեկն էլ նշանավոր չէ: Դրանցից մեկն է և Մարտիրոս Ղրիմեցին: Իհարկե չպետք է ժխտել նրանց դերն ու նշանակությունը, ընդհակառակը, պետք է նրանք ուսումնասիրվեն պարզելու այդ մասը շրջանում ժողովրդի հոգևոր կյանքի պատմության պատկերը, այն կենսական ուժը, որը փարթամացավ ու հասցրեց կուլտուրայի վերանորոգման:

Մեկնակետ ունենալով XVII դարը վերածնվող հայ մշակութային դար և Մարտիրոս Ղրիմեցուն այդ վերածնման շարժումը սկզբնավորողներից մեկը համարելու իր միանգամայն սխալ տեսակետը՝ Ղրիմեցու ստեղծագործության բոլոր տեսակների մասին խոսելիս, Մարտիրոսյանը XVII դարում տեսնում է «նոր երանգ ու որակ» (էջ 66), որի առաջին արտահայտիչն է նրա ուսումնասիրած հեղինակը՝ Այսպես՝ նա առաջինն է, որ հայ գրականության մեջ «զավեշտը բարձրացրեց երգիծանքի աստիճանին»² (էջ 50, 65): Քնարական ստեղծագործության մեջ ևս

1 Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, II, էջ 437 և հտ.:

2 Մարտիրոսյանը անգիտանում է, որ զավեշտը ևս երգիծանք է, ուստի անիմաստ է նրա պնդումը Ղրիմեցու կողմից զավեշտը երգիծանքի աստիճանին բարձրացնելու մասին:

նա XVII դարի «նոր բանաստեղծության թարմարույր շունչը» կրող բանաստեղծն է (էջ 67)։ Նույնն է ասվում Ղրիմեցու չափածո ժամանակագրության մասին՝ որպես առաջիններից, որտեղ իբրև բաղադրական վերհուշ շարադրված է մեր պատմության սկզբից մինչև Կիրիկյան թագավորության անկումը (էջ 43) և այլն։

Մի երկու խոսք Ղրիմեցու երգիծական ստեղծագործությունների՝ Մարտիրոսյանի գնահատման մասին։ Ղրիմեցին ունի մի քանի տաղեր, որոնց մեջ պարսավում է մի երկու երեցների։ Այդ ոտանավորները երգիծական են, որքանով որ պարսավական ոտանավորներ են՝ նվիրված առանձին, կոնկրետ անձանց, ոտանավորների հեղինակը պարսավանք էլ կոչում է («Սիրիստրեցի Յակոբ երիցուն պարսավանքն է»)։ Դրանք տարբերվում են Ղրիմեցուն նախորդող հեղինակների «Վասն Հերիսի», «Ի վերայ ակոսի», «Ի վերայ ճանճի», «Վասն թիթի» և նման ստեղծագործություններից այնքանով, որքանով Ղրիմեցու մոտ պարսավանքն է նպատակը։ Այդ ոտանավորները ունեն պատմական ու կենցաղագրական արժեք, հոգևորականների երգիծված դիմանկարներ տրված են, սակայն դրանց մեջ ընդհանրացումը լայն չէ, այնպես որ չի կարելի ասել, թե Ղրիմեցին ամբողջ ուժով ու խորությամբ մերկացրել, նշավակել է հայ եկեղեցականների ապականված, փչացած բարքերը» (էջ 54), դրանք սոցիալական ծաղրի «զեղեցիկ» նմուշներ չեն, ինչպես պնդում է Մարտիրոսյանը (էջ 56)։ XVII դարի պատրիարք Մարտիրոս Ղրիմեցին չէր ևլ կարող հայ հոգևորականությանը սոցիալական ծաղրի ենթարկել։ Մեր կարծիքով Ղրիմեցու պարսավական ոտանավորները «սոցիալական ծաղրի զեղեցիկ նմուշ»-ներ համարելը անհեթեթություն կլինի։ Ըստ արժանության չեն գնահատված նաև Ղրիմեցու այսպես կոչված՝ քնարական տաղերը։ Դրանք, իսկապես, շատ հասարակ ոտանավորներ են՝ զեղարվեստական շատ ցածր արժեքով, եթե համեմատելու լինենք մեր միջնադարյան տաղասացների՝ Կոստանդին Երզնկացու, Հովհ. Թվրույանցու, Դր. Աղթամարցու և հենց XVII դարի տաղասացներ Դավիթ Սալաձորեցու, Ստեփանոս Վարազեցու, Խասպեկի, Պետրոս Ղափանցու և ուրիշների ստեղծագործությունների հետ։ Չնայած դրան, Մարտիրոսյանը Ղրիմեցու ոտանավորները, որոնք զեղարվեստական առանձին արժեք չեն ներկայացնում, համարում է «զեղարվեստական հասուն վարպետությամբ» գրված «զոդուրիկ տաղեր»՝ նվիրված բնությանը, խնջույքին և գինուն» (էջ 69, բնագծումները

մերն են—էմ. Պ.), և ջանք չի խնայում դրանք բարձրացնելու, մեծարժեք ցույց տալու համար։

Նման ջանքերի հետևանքն է, որ Մարտիրոս Ղրիմեցին դուրս է բերվել որպես մեկը, որը կանխազգացել է միջնադարյան հայ բանաստեղծության, «վատ կրքերի գիրկը նետվելը» և զգաստ լինելու հորդոր է կարգացել։ Լսենք Մարտիրոսյանին. «Ասվեց, որ վայելքի անզուսպ տենչը մեր բանաստեղծությունը կարող էր նետել վատ կրքերի գիրկը (!) և որոշ չափով այդպես էլ եղավ։ Ղրիմեցին այդ բանը կանխազգում է և, շմերժելով գինին և ուրախությունը, հորդորում է զգաստ լինել, աշխատում է միշտ պահել չափի զգացումը» (էջ 71)։

Այսպես ուրեմն՝ խրախուսելի աշխատանք է կատարել սկսնակ բանասեր Ա. Մարտիրոսյանը հետազոտության առարկա դարձնելով մեր ժողովրդի պատմության մեջ դեռևս քիչ ուսումնասիրված XVII դարի համեմատաբար սակավ ծանոթ հեղինակներից մեկի գործունեությունն ու ստեղծագործությունը։ Հիմնականում հաջող են պատրաստված Մարտիրոս Ղրիմեցու տաղերի բնագրերը, գնահատելի են ընդարձակ ծանոթագրությունները։ Սակայն նույնը չի կարելի ասել այն մասի վերաբերյալ, որտեղ վերլուծվում ու գնահատվում են Ղրիմեցու գործունեությունն ու ստեղծագործությունը։ Այստեղ ճիշտ վերլուծումների ու դիտողությունների հետ միասին, Մարտիրոսյանը՝ տարվելով իր ուսումնասիրած հեղինակով, կորցրել է օբյեկտիվ գնահատման չափանիշը և չափազանցությունների ու ծայրահեղությունների մեջ ընկել։ Հետևանքը եղել է այն, որ ստեղծագործական թույլ կարողությունների տեր հեղինակը ներկայացվել է իբրև նշանավոր ու մեծ դեր ունեցող, ժողովրդասեր, հայ ժողովրդի քառատումը և ազգային-ազատագրական միտքը թուլանալ ու մարել թույլ չտվող փորձիչ։

Անցյալի ժառանգությունն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ ամեն ինչ չէ ար-

ի գեպ՝ վերջին տարիներս ծայր է առել մի վատ սովորություն. հրատարակվում են միջնադարյան հեղինակների երկերը դրանք ուսումնասիրողի ու տեքստերը պատրաստողի անուշով, և ասենք, Խաչատուր Կեչառեցու երկերը ընթերցողը պետք է փնտրի ու գտնի Մ. Ավգարեկյան անվան տակ, Ա. Նիրակացու և Հովհաննես Իմաստասերի երկերը՝ Ա. Արքայանյան անվան տակ, Հովհաննես Երզնկացու երկերը՝ Արմենուհի Սրապյան անվան տակ. Դժբախտաբար, այդ սովորությունն է հետևել սառ Ա. Մարտիրոսյանը։

ժերավոր ու կարևոր, կան նաև սակավաթիվ գործեր ու գործիչներ, որոնք չպետք է զնահատվեն իրենց իրական արժեքից բարձր, հակառակ

դեպքում աղավաղվում է մեր կուլտուրայի ու գրականության դարգացման ընթացքի պատկերը:

ԷՄ. ՊԻՎԼՈՅՈՒՆ

Հ. Մ. ՌԻՖՄԱՆՅԱՆ, Սյունիքը IX—X դարերում, Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1958:

Պատմ. գիտ. թեկնածու Հ. Ռիֆմանյանի «Սյունիքը IX—X դարերում» աշխատությունը բաղկացած է երեք գլխից՝ «Սյունիքի քաղաքական պատմությունը IX—X դարերում», «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Սյունիքում IX—X դարերում» և «Դասակարգային պայքարը Սյունիքում X դարում»: Սկզբում տրված է «Այբրյուռների համառոտ տեսություն», վերջում հավելված՝ «Իշխանական տների վերլուծում»:

Աշխատությունը հենց սկզբից ուշադրություն է գրավում նրանով, որ վերաբերում է Հայաստանի ամենախոշոր ու շատ կողմերով աչքի ընկնող երկրամասերից մեկին՝ Սյունիքի քաղաքական ու սոցիալական դեպքերով թերևս ամենահարուստ ժամանակաշրջանին՝ IX—X դարերի պատմությանը: Հեղինակն օգտագործելով հայկական և օտար սկզբնաղբյուրները, հաջող կերպով վեր է լուծել սոցիալ-դասակարգային ու քաղաքական կարգի շատ հարցեր:

Հ. Ռիֆմանյանի աշխատության արժանիքներից մեկն է հողատիրական հարաբերությունների խորն ու գիտական վերլուծությունը և այդ շրջանի Հայաստանի ֆեոդալական սիստեմին հասուկ մի շարք տերմինների բացատրությունը: Առաջին գլխում հեղինակը հանգամանորեն քննարկելով IX—X դարերի Սյունիքի պատմությունը, հանգում է այն ճիշտ եզրակացության, որ Ստեփանոս Օրբելյանը «Գրել է այն թուրքի գահակալ իշխանների պատմությունը, այլ նրանցից գլխավորների պատմությունը», (էջ 27). և որ ներքին միջֆեոդալական պայքարի շնորհիվ IX դարի սկզբներին Վասակ «Իշխանաց իշխեցողին» է հաջողվում Սյունիքի մյուս իշխաններին ենթարկել իրեն՝ որպես սրանց նկատմամբ սյուզերեն դիրք ունեցող գահերեց իշխան: Սակայն, այնուամենայնիվ, Սյունիքն իր ֆեոդալական ներքին հարաբերություններով այդ ժամանակ այնքան մեկ նախարարի պատկանող «նահապետություն» չէր, ինչպես առաջներում, այլ իրենից ներկայացնում էր մի շարք գահակալ իշխանների սեփականություն, որը, անշուշտ, արդյունք էր ֆեոդալական նոր մասնավոր վիճակի (ընդգծումը մերն է — Ս. Ռ-Ք): Այդ բանն իր հերթին արդյունք էր նա-

խարարական սիստեմի քայքայման և հողատեր աղնավականների առանձին դասի առաջացման, որի մեջ մտնող ամեն մի անհատ համարվում էր անկախ ու ինքնուրույն ֆեոդալ: Միանգամայն համոզեցուցիչ է հեղինակի այն թեզը, որ Սյունիքի նախարարության քայքայման և մի քանի առանձին իշխանությունների առաջացման երկվույթն սկսվել է VIII դարի սկզբներից և ավարտվել IX-ի սկզբին (էջ 30): Վերաբերյալական աղնավականության մի նոր շերտ, որի քաղաքական վիճակը անկախ ինքնուրույն իշխանությունն էր, իսկ տնտեսական վիճակը՝ մասնատված, առանձին հողատեր կալվածատիրությունը: Դա ֆեոդալական հարաբերությունների զարգացումն ու խորացումն էր» (էջ 30): Այս հարցի կապակցությամբ Հ. Ալիշանի և Լորանի կողմից արտահայտված սխալ և ոչ գիտական կարծիքները ենթարկվել են հիմնավոր ու տեղին քննադատության:

Աշխատության առաջին գլխի մի առանձին ենթաբաժնում (էջ 34—74) տրված է Բաբեկի շարժման և Սյունիքի փոխհաբերությունների պատմությունը, որը մեր կարծիքով, որոշ գիտությունների տեղիք տալով հանգրծ, գրքի ամենահաջողված մասերից մեկն է: Հ. Ռիֆմանյանը մարքսիստորեն է բացատրել խուրամիզյան և բաբեկյան շարժման սոցիալական դրդապատճառները, դրանք համարելով շահագործման ծանրությունը և գույքային անհավասարությունը: Անդրադառնալով այդ շրջանի Սյունիքի միջֆեոդալական պայքարի հարցերին, հեղինակն այս գլխում միանգամայն ճիշտ կերպով գտնում է, որ այդ պայքարը առանձին ֆեոդալների՝ իրար ձեռքից կալվածքներ խլելու և առանձնանալու ձգտումների արդյունք էր, որի մեջ արտաքին գործոններն ու հանգամանքները կատարել են երկրորդական դեր միայն:

Իր ընդգրկած հարցերով ուշադրության արժանի է նաև աշխատության երկրորդ գլուխը: Այստեղ մենք ի նկատի ունենք հատկապես առաջին ենթաբաժինը, որտեղ քննության են առնվում հողատիրության իրավունքն ու ձևերը: